Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-734/-16.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն Աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 108.1-րդ և 108.2-րդ հոդվածներով.

«Հոդված 108.1. Աշխատողի լիազորությունների կասեցման իրավական հետևանքները

1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի լիազորությունների՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման պահից մինչև կասեցման վերաբերյալ որոշման վերացումը նրա աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է նաև ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ մնացած վճարումը կատարելով քրեական գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

2. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման ընթացքում նա չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

3. Լիազորությունների կասեցումը արգելք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

4. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին մասը կիրառվում է, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 108.2. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավական հետևանքները

1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելն աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված:

2. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում հանրային ծառայության մեջ գտնվող անձի աշխատավարձը չի պահպանվում:

3. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողը չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

4. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելն արգելք չէ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կիրառվում են, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ կետը «մասամբ» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող հանրային ծառայության մեջ գտնվող անձին հատուցում վճարելու այն ժամանակահատվածների, երբ քրեական գործի ավարտի դեպքում կայացվել է մեղադրական դատավճիռ կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով» բառերով:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող անձին հատուցում վճարելու վերաբերյալ կարգավորումը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիազորությունների կասեցման դեպքերի նկատմամբ: Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող անձին աշխատավարձ չվճարելու վերաբերյալ կարգավորումը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նկատմամբ:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային

ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի աշխատանքային լիազորությունները, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ աշխատանքային լիազորություններն իրականացնելով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:

Ինչպես ուղղակիորեն բխում է հիշյալ դրույթից, քրեական դատավարության օրենսգիրքը հնարավոր է համարում միայն հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը դադարեցնելը՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Սակայն գործնականում անհրաժեշտություն է առաջանում նաև այն անձանց լիազորությունների կասեցման, որոնք հանրային ծառայության մեջ չեն գտնվում:

Հանրային ծառայության մեջ չգտնվող անձի աշխատանքային լիազորությունների ժամանակավոր դադարեցման՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցը կիրառելի է առհասարակ պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ՝ առանց սահմանազատում դնելու, թե անձը ներգրավված է հանրային ծառայության մեջ, թե ոչ: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝

«Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման անհրաժեշտության դեպքում քննիչը՝ քննչական բաժնի ղեկավարի համաձայնությամբ, կամ հետաքննիչը՝ դատախազի համաձայնությամբ, նախաքննության կատարման վայրի դատարան են ներկայացնում համապատասխան միջնորդություն (...)»:

Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

«Դատախազը, նրա տեղակալը կամ ԲՀ-ի քննչական կոմիտեի նախագահը կամ ԲՀ-ի ազգային անվտանգության կոմիտեի նախագահը կամ նրանց պարտականությունները կատարող անձը, ինչպես նաև քննիչը՝ դատախազի կամ նրա տեղակալի թույլտվությամբ կամ դատարանը իրավասու են դադարեցնել կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարումը, եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ պաշտոնում մնալով, նրանք կարող են խոչընդոտել քրեական գործի մինչդատական վարույթին կամ դատական քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվեն հանցավոր գործունեությամբ՝ կապված այդ պաշտոնում մնալու հետ (...)»:

Էստոնիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝

«Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարումը դադարեցվում է դատախազի միջնորդության հիման վրա նախաքննության կատարման վայրի դատարանի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ, եթե շարունակելով աշխատանքը՝ նա կարող է շարունակել հանցանքի կատարումը կամ աշխատանքը շարունակելը կարող է վնասել քրեական դատավարությանը (...)»:

Նմանատիպ կարգավորումներ նախատեսված են նաև այլ երկրների օրենսդրությամբ:

Ինչ վերաբերում է լիազորությունների կասեցման (ժամանակավոր դադարեցման) դեպքում աշխատավարձի վճարման կարգին, ապա այս մասով հանրային ծառայության մեջ գտնվող ոչ բոլոր անձանց աշխատավարձի վճարման կարգն է օրենսդրորեն ամրագրված: Ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, «Դատախազության մասին», «ՀՀ քննչական կոմիտեի մասին», «Քրեակատարողական ծառայության մասին», «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին» և այլ օրենքներով նախատեսվում են համապատասխան ծառայողների լիազորությունների կասեցման դեպքում վերջիններիս աշխատավարձի վճարման կարգը:

Ուստի, հաշվի առնելով վերոշարադրյալը, գործնականում անհրաժեշտություն է առաջացել քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված հիմքերով

պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման դեպքում սահմանել կասկածյալի կամ մեղադրյալի աշխատավարձի չափն ու կարգը, ինչպես նաև արձակուրդի տրամադրման կարգը, այն դեպքերի համար, որոնք ոլորտային օրենսդրությամբ նախատեսված չեն:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Աշխատավարձը օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:»:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից երևում է, որ աշխատավարձը աշխատանքներ կատարելու դիմաց հատուցումն է, ուստի այն պարագայում, երբ աշխատողը իր լիազորությունները կասեցված լինելու ժամանակ որևէ աշխատանք չի կատարում և չի կարող կատարել, աշխատավարձի մասին ևս խոսք լինել չի կարող:

Այնուամենայնիվ սոցիալական յուրաքանչյուր պետության խնդիրներից է իր քաղաքացիների արժանավայել կյանք վարելու համար համապատասխան պայմանների ստեղծումը: Այսպես.

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը:

Այս առումով հարկ է նշել նաև, որ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնավարումը ժամանակավոր դադարած կասկածյալը կամ մեղադրյալը իրավունք ունի ստանալ ամսական նպաստ: Ընդ որում՝ նպաստը տրամադրվում է նվազագույն կենսաապահովման համար անհրաժեշտ չափով:

Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածը ևս նախատեսում է ամսական նպաստ տրամադրելու հնարավորությունը, սակայն, բացառություն նախատեսելով այն անձանց համար, ովքեր զբաղվում են վճարովի այլ գործունեությամբ: Այդ անձանց նպաստ չի տրամադրվում: Հարկ է նշել նաև, որ նույն հոդվածի համաձայն՝ նպաստի տրամադրումը դադարում է, եթե անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Վերը շարադրվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ լիազորությունները կասեցված անձին տրամադրվող հատուցումը նպատակ ունի տվյալ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն վերը նշված երկրների օրենսդրական կարգավորումների՝ Նախագծով, կարևորվելով անձի իրավունքների իրացումը, հատուցում նախատեսվել է անձի հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով:

Ընդ որում՝ նախատեսվել է հնարավորություն՝ գործի՝ արդարացման հիմքով ավարտի դեպքում հիմնական աշխատավարձի մնացած մասը ստանալու հնարավորություն՝ փոխհատուցելով անձին՝ աշխատանք կատարելու և դրա համար համապատասխան վարձատրություն ստանալու հնարավորությունից անհիմն զրկված լինելու համար:

Այս առումով հարկ է նշել նաև, որ գործի՝ արդարացման հիմքով ավարտի դեպքում անձանց մոտ առաջանում է չստացած աշխատավարձի չափով պետության դեմ պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք: Մյուս բոլոր դեպքերում (օրինակ, երբ կայացվել է մեղադրական դատավճիռ կամ գործը կարճվել է ոչ արդարացնող հիմքով (համաներման կիրառում և այլն)), այդպիսի իրավունք չի ծագում, մինչդեռ աշխատանք չկատարելու դեպքում աշխատավարձի պահպանման պարագայում կստացվի մի իրավիճակ, երբ պետությունը պաշտոնատար անձի լիազորությունների կասեցման ողջ ժամանակահատվածում զրկվում է վերջինիս աշխատանքի արդյունքում ստացվող հավելյալ արժեքից (անհատույց աշխատավարձ է վճարում), ավելին՝ այդպիսի պաշտոնատար անձանց վարձատրությունը պահպանվում է անկախ այն հանգամանքից, թե այլ

հավասար պայմաններում կունենային վերջիններս հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք, թե ոչ:

Բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածում սահմանված կարգի, «Քրեակատարողական ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Քննչական կոմիտեի մասին» և «Դատախազության մասին» օրենքներով սահմանվում են կարգավորումներ՝ կապված անձի լիազորությունների կասեցման (ժամանակավորապես դադարեցման) հետ՝ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում: Վերոնշյալ օրենքների վերլուծությունից բխում է, որ անձի լիազորությունները կասեցվում են անկախ այն հանգամանքից՝ առկա է քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված՝ դատախազի կամ վերջինիս համաձայնությամբ քննիչի համապատասխան որոշումը՝ լիազորությունների կասեցման վերաբերյալ, թե՝ ոչ: Ըստ այս օրենքների՝ լիազորությունները կասեցվում են քրեական հետապնդում հարուցելու հիմքով՝ ինքնաբերաբար:

Սահմանադրական դատարանն իր 2020 թվականի փետրվարի 25-ի որոշման մեջ անդրադարձել է անձի պաշտոնավարության ժամանակավորապես դադարեցման դրույթներին: Մասնավորապես, նշելով, որ հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն չպետք է իրականացվի ոչ խտրական հիմքերով՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, թե ոչ, և անկախ որևէ այլ հանգամանքից, որն օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով չի հանգեցնում նրա պաշտոնավարման իրավունքին իրավաչափ միջամտության, ինչպես նաև հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, լինի համաչափ: Քրեադատավարական ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության պայմաններում սոսկ քրեական հետապնդման հարուցման փաստի ուժով հավելյալ օրենսդրական սահմանափակումներ ամրագրելը չի կարող հետապնդել Սահմանադրության տեսանկյունից արդարացված որևէ նպատակ, ուստի չի կարող արդարացվել ո՛չ հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությամբ, ո՛չ էլ հանրային ծառայության որևէ կոնկրետ տեսակի առանձնահատկություններով: Քրեական հետապնդում հարուցելու փաստը որևէ կերպ չի կարող հիմք դառնալ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարումը կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նրա նկատմամբ չի ընտրվել դատավարական ներգործության այնպիսի միջոց, որը արգելափակում է նրա հետագա պաշտոնավարումը:

Ուստի, կարելի է գալ այն եզրահանգման, որ բոլոր դեպքերում անձի՝ իր լիազորությունների կասեցումը (ժամանակավորապես դադարեցումը) պետք է պարտադիր հիմքում ունենա քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված որոշումը: Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պետք է գործի վարույթի շրջանակներում, գնահատի լիազորությունների կասեցման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու դեպքում օրենսդրական հստակ կարգավորում առկա չէ աշխատանքային իրավահարաբերությունների տիրույթում անձի լիազորությունների կասեցման (ոչ որպես դատավարական հարկադրանքի միջոց) մասով: Ուստի, անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակեցնել նաև այս խնդիրը՝ նախատեսելով համապարփակ կարգավորումներ, որոնք կհավասարակշռեն թե՛ աշխատողի, թե՛ գործատուի շահերը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծերով առաջարկվում է.

1) Եզրութաբանական միասնությունն ապահովելու նպատակով «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում» ձևակերպման փոխարեն խնդրո առարկա հարկադրանքի միջոցի համար գործածել «աշխատողի լիազորությունների կասեցում» եզրույթը:

2) Լիազորությունների կասեցում հարկադրանքի միջոցը կիրառել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողների, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձանց նկատմամբ: Այս համատեքստում հարկ է նշել, որ Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի գործող խմբագրությունը հնարավորություն է տալիս ժամանակավոր կասեցնելու միայն հանրային ծառայության մեջ գտնվող անձի լիազորությունները, մինչդեռ, գործնականում անհրաժեշտություն է առաջանում ժամանակավոր կասեցնելու ինչպես հանրային ծառայության մեջ գտնվող, այնպես էլ հանրային ծառայության մեջ չգտնվող աշխատողների (օրինակ՝ իրավաբանական անձի ղեկավար-կարգադրիչ կամ ֆինանսատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց և այլն) լիազորությունները, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում վերջիններս կխոչընդոտեն մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվեն հանցավոր գործունեությամբ:

3) Խնդրո առարկա դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման համար նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշման իրավաչափության հաստատման ընթացակարգ՝ հաշվի առնելով աշխատողների իրավունքների իրացման և պաշտպանության ապահովման, ինչպես նաև հնարավոր կամայականությունների բացառման անհրաժեշտությունը: Խնդրո առարկա դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը հետագա պարտադիր դատական վերահսկողության առարկա դարձնելու շրջանակներում նախատեսվել է միջնորդությունների քննության հստակ կարգ, որը կապահովի անձի իրավունքների առավելագույնս երաշխավորումը:

4) Միասնականացնել ոլորտային տարբեր օրենքներով լիազորությունների կասեցման համար նախատեսված հիմքերը՝ բացառելով բացառապես քրեական հետապնդում հարուցելու (իրականացնելու) փաստով պայմանավորված լիազորությունների կասեցման դեպքերը: Ոլորտային տարբեր օրենքներով լիազորությունների կասեցման համար նախատեսված հիմքերը սույն նախագծերի փաթեթով միասնականացվել են՝ բացառելով բացառապես քրեական հետապնդում հարուցելու (իրականացնելու) փաստով պայմանավորված լիազորությունների կասեցման դեպքերը:

Մասնավորապես՝ ներկայումս մի շարք օրենքներով նախատեսված դրույթն առ այն, որ աշխատողի լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հիմքով, խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում բացակայում է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ քրեական հետապնդում իրականացնող մարմնի համապատասխան որոշումը: Այսինքն՝ անձի լիազորությունների կասեցումն ուղղակի կապված է իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հետ՝ անկախ այն հանգամանքից՝ համաչափ և անհրաժեշտ է նմանատիպ սահմանափակում կիրառելը, թե՝ ոչ: Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ դատախազը կամ վերջինիս համաձայնությամբ նաև քննիչը կարող են դադարեցնել անձի պաշտոնավարությունը որոշակի ժամկետով, միայն այն դեպքում եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ: Ուստի, աշխատողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցման իրավական հիմքը պետք է լինի միայն վերոնշյալ հոդվածով սահմանված դեպքը:

Առաջարկի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ հանգեցնում է անձի լիազորությունների հարկադիր կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, պետք է լինի համաչափ:

5) Հստակեցնել դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման դեպքում լիազորությունների կասեցման պահը:

6) Միասնականացնել խնդրո առարկա դատավարական հարկադրանքի միջոցի դեպքում աշխատողի իրավական վիճակի հետ կապված կարգավորումները: Հարկ է նշել, որ լիազորությունների ժամանակավոր դադարեցման դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող ոչ բոլոր անձանց վերաբերյալ են առկա օրենսդրական կարգավորումներ՝ կապված նրանց աշխատավարձի պահպանման չափի ու կարգի, ինչպես նաև քրեական գործի շրջանակներում անձի լիազորությունների դադարեցման՝ որպես բացառապես քրեադատավարական հարկադրանքի միջոցի կիրառման հետ: Այս առումով հատկանշական է նաև այն, որ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1507 որոշմամբ արձանագրել է խնդրի կապակցությամբ առկա օրենսդրական կարգավորումների միասնականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև քրեադատավարական ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության պայմաններում սոսկ քրեական հետապնդման հարուցման փաստի ուժով հավելյալ օրենսդրական սահմանափակումներ ամրագրելու անթույլատրելիությունը:

Նախագծով ամրագրվել է նաև, որ **լիազորությունների կասեցման ընթացքում աշխատողի աշխատատեղը պահպանվում է, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձանց դեպքում վճարվում է նաև ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով՝ մնացած վճարումը կատարվելով գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:** Հստակ ամրագրվել է, որ լիազորությունների կասեցումն արգելք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը:

7) ***Հստակեցնել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում աշխատանքային իրավահարաբերությունների տիրույթում առաջացող իրավական հետևանքները:*** Նկատի ունենալով այն, որ կալանքի տակ գտնվելու և, ըստ այդմ, անազատության մեջ լինելու ժամանակահատվածում օբյեկտիվորեն հնարավոր չէ աշխատանքային լիազորությունների կատարումը, առաջարկվում է Աշխատանքային օրենսգիրքը լրացնել նոր՝ 108.2-րդ հոդվածով, որով կարգավորվում են աշխատանքային իրավահարաբերությունների տիրույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու դեպքում անձի լիազորությունների կասեցման հետ կապված հարաբերությունները՝ կարգավորելով դրա իրավական հետևանքները: Առաջարկվում է սահմանել, որ կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում անձի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է, սակայն աշխատավարձ չի վճարվում, քանի որ կալանքի տակ գտնվող անձը պետության հոգածության ներքո է: Հաշվի առնելով այն, որ կալանքի կիրառման դեպքում մեղադրյալի աշխատավայրը ևս պետք է տեղեկացվի այդ մասին՝ նախատեսվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից գրավոր և անհապաղ իրազեկման պահանջ:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերով նախատեսվող իրավակարգավորումների ընդունման արդյունքում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը խոչընդոտելու կամ հանցավոր գործունեությամբ զբաղվելու ենթադրության դեպքում կապահովվի մեղադրյալ աշխատողի լիազորությունների կասեցման հնարավորությունը, և համապատասխանաբար՝ նմանատիպ ներգործության իրավական հիմքում կդրվի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքը, ինչպես նաև կսահմանվի տվյալ դեպքի համար հանրային ծառայության մեջ գտնվող անձանց վճարվող հատուցման չափը:

Միաժամանակ, Նախագծերի փաթեթով կհստակեցվեն *կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում աշխատանքային իրավահարաբերությունների փիրույթում առաջացող իրավական հետևանքները:*

Կ-734[1]-16.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն Աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 108.1-րդ և 108.2-րդ հոդվածներով ~~107.1-րդ հոդվածով~~.

«Հոդված 108.1~~107.1.~~ Աշխատողի լիազորությունների կասեցման իրավական հետևանքները

1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի , այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի ~~լիազորությունները~~լիազորությունների՝ Հայաստանի Հանրապետության ~~<<~~ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման պահից մինչև կասեցման վերաբերյալ որոշման վերացումը~~ կամ կալանավորումը որպես խափանման միջոց փոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշման կայացումը աշխատողի~~ նրա աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող ~~անձանց~~ անձի դեպքում վճարվում է նաև ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ մնացած վճարումը կատարելով քրեական գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

2. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման ընթացքում ~~աշխատողը~~ նա չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

3. Լիազորությունների կասեցումը արգելք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

4. Հանրային ծառայության մեջ գտնվող ~~անձանց~~ անձի դեպքում սույն հոդվածի 1-ին մասը կիրառվում է, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 108.2. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավական հետևանքները

1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելն աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված:

2. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում հանրային ծառայության մեջ գտնվող անձի աշխատավարձը չի պահպանվում:

3. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողը չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

4. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելն արգելք չէ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կիրառվում են, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ կետը «մասամբ» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող հանրային ծառայության մեջ գտնվող անձին հատուցում վճարելու այն ժամանակահատվածների, երբ քրեական գործի ավարտի դեպքում կայացվել է մեղադրական դատավճիռ կամ ~~գործը կարճվել է~~ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով» բառերով:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները Հայաստանի Հանրապետության~~<<~~ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող անձին հատուցում վճարելու վերաբերյալ կարգավորումը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիազորությունների կասեցման դեպքերի նկատմամբ: Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող անձին աշխատավարձ չվճարելու վերաբերյալ կարգավորումը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734-16.09.2020-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[1]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[2]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[3]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[4]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[5]-16.09.2020-ՊԻ-011/1), «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[6]-16.09.2020-ՊԻ-011/1), «ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[7]-16.09.2020-ՊԻ-011/1), «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[8]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[9]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[10]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[11]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[12]-16.09.2020-ՊԻ-011/1), «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-734[13]-16.09.2020-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 1), հոդված 1**	Առաջարկվում է. 1) Հստակեցնել խնդրո առարկա հարկադրանքի միջոցի կիրառման հիմքերը: 2) Հստակեցնել խնդրո առարկա հարկադրանքի միջոցը կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը և դրա ընթացակարգը, նախատեսել, որ լիազորությունների կասեցման մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման իրավաչափությունը ենթակա է հաստատման դատարանի կողմից: 3) ՀՀ քրեական դատավարության	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:

			օրենսգրքի 152-րդ հոդվածի խմբագրվող տարբերակից հանել հոդվածի 3-րդ մասը՝ չկապելով կալանավորում խափանման միջոցի կիրառումը խնդրո առարկա դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման հետ: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննարկվող հարկադրանքի 2 միջոցների կիրառման հիմքերն ըստ էության նույնաբնույթ են, և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում լիազորությունների ժամանակավոր կասեցում հարկադրանքի միջոցի կիրառման հիմքերն արդեն իսկ չեզոքանում են: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է պարզեցնել առաջարկվող լուծումը՝ հստակեցնելով աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավական հետևանքները: Հաշվի առնելով այն, որ վերջինս չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի խմբագրվող տարբերակի կարգավորման առարկա՝ հարկ է առաջարկվող նոր լուծումը նախատեսել ՀՀ աշխատանքային օրենսգրքում: 4) Հաշվի առնելով, որ գործող քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանության համատեքստում դատարանի կողմից կիրառված դատավարական հարկադրանքի միջոցները կարող են վերացվել դատարանի և դատախազի կողմից, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի խմբագրվող տարբերակի 4-րդ մասում (վերահամարակալվել է որպես 3-րդ մաս) «դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի» բառերը փոխարինել «նաև դատախազի» բառերով: Նշված առաջարկների տրամաբանությանը		

			համահունչ առաջարկվում է նախագիծ 1-ի 1-5-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** Քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 152-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 152. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցումը** 1. Քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատախազը կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչը, իսկ դատարանում քրեական գործը քննելիս դատարանը՝ մեղադրանքի կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, կարող է կասեցնել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի լիազորությունները, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ աշխատանքային լիազորություններն իրականացնելով՝ նա կխոչընդոտի գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կկատարի քրեական օրենքով չթույլատրված արարք: Քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից կայացված՝ լիազորությունների կասեցման մասին որոշումը եռօրյա ժամկետում ներկայացվում է դատարանի հաստատմանը: 2. Կասկածյալի կամ մեղադրյալի		

			կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված լիազորությունների կասեցման մասին որոշումն ընդունելու պահից: Լիազորությունների կասեցման մասին որոշումը վարույթն իրականացնող մարմնի կողմից ստորագրությամբ հանձնվում է կասկածյալին կամ մեղադրյալին և անհապաղ ուղարկվում վերջինիս աշխատավայր: 3. Լիազորությունների կասեցման մասին որոշումը վերացվում է դատարանի, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում՝ նաև դատախազի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Լիազորությունների կասեցման մասին որոշումը վերացվելուց հետո անհապաղ վարույթն իրականացնող մարմնի կողմից ուղարկվում է կասկածյալի կամ մեղադրյալի աշխատավայր:»: **Հոդված 2.** Օրենսգրքի 280-րդ հոդվածը «կալանքը որպես խափանման միջոց կիրառելը,» բառերից հետո լրացնել «կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման մասին որոշման իրավաչափության հաստատումը,» բառերով: **Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 283.1-րդ հոդվածով. **«Հոդված 283.1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու**		

			վերաբերյալ միջնորդության քննարկման կարգի առանձնահատկությունները 1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդությունը քննվում է դատավորի կողմից՝ միանձնյա: 2. Դատարանի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված միջնորդությունը քննվում, և դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի: 3. Դատարանի պահանջով կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի, մեղադրյալի կամ նրա պաշտպանի նախաձեռնությամբ միջնորդությունը քննարկվում է դռնփակ դատական նիստում: 4. Դատարանը միջնորդությունը քննում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը: 5. Միջնորդության քննությունն ավարտելուց հետո դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և լիազորությունների կասեցման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու մասին, կամ միջնորդությունը մերժելու և լիազորությունների կասեցման մասին որոշումը վերացնելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Որոշումը կայացնելու օրը դատարանն այն հանձնում է միջնորդությունը ներկայացրած պաշտոնատար անձին,		

			մեղադրյալին և նրա պաշտպանին: 6. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում միջնորդության քննության կարգի նկատմամբ վերաբերելի մասով կիրառելի են սույն օրենսգրքի 285-րդ հոդվածով նախատեսված կանոնները, եթե սույն հոդվածով այլ բան նախատեսված չէ:»: **Հոդված 4.** Օրենսգրքի 285-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մասով. «5.1. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին վարույթն իրականացնող մարմինն անհապաղ գրավոր իրազեկում է մեղադրյալի աշխատավայր:»: **Հոդված 5.** Օրենսգրքի 376[1]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «իրավունքի սահմանափակման» բառերից հետո լրացնել «, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման իրավաչափությունը հաստատելու» բառերով:»:		
2.		**«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 2), հոդված 1**	Առաջարկվում է. 1) Հոդվածում «հոդվածով» բառը փոխարինել «108.1-րդ և 108.2-րդ հոդվածներով» բառերով: Ըստ այդմ՝ վերահամարակալել լրացվող՝ 107.1-րդ հոդվածը: 2) Լրացվող 108.1-րդ հոդվածի 1-ին մասում «աշխատողի» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի» բառերը,	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:

			«լիազորությունները ՀՀ» բառերը փոխարինել «լիազորությունների՝ Հայաստանի Հանրապետության» բառերով, «կամ կալանավորումը որպես խափանման միջոց փոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշման կայացումը» բառերը հանել, իսկ «աշխատողի» բառը փոխարինել «նրա» բառով, «անձանց» բառը՝ «անձի» բառով, իսկ «գործի» բառից առաջ լրացնել «քրեական» բառը: 3) Լրացվող 108.1-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատողը» բառը փոխարինել «նա» բառով: 4) Լրացվող 108.1-րդ հոդվածի 4-րդ մասում «անձանց» բառը փոխարինել «անձի» բառով: 5) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 108.2-րդ հոդված. **«Հոդված 108.2. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավական հետևանքները** 1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելն աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված: 2. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում հանրային ծառայության մեջ գտնվող անձի աշխատավարձը չի պահպանվում: 3. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողը չի		

			կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից: 4. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելն արգելք չէ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը: 5. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կիրառվում են, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:»:		
3.		**Նախագիծ 2, հոդված 2**	Առաջարկվում է «, երբ» բառից հետ լրացնել «քրեական» բառը, իսկ «գործը կարճվել է» բառերը փոխարինել «քրեական հետապնդումը դադարեցվել է» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.		**Նախագիծ 2, հոդված 3**	Առաջարկվում է հոդվածից «կասկածյալի կամ» բառերը հանել, «ՀՀ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով: Միաժամանակ առաջարկվում է նշված մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքում հանրային ծառայության մեջ գտնվող անձին աշխատավարձ չվճարելու վերաբերյալ կարգավորումը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նկատմամբ:»:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

5.		**«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածում «բառերը» բառից հետո լրացնել «, իսկ «ժամանակավորապես դադարեցվել» բառերը փոխարինել «կասեցվել» բառով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
6.		**«Քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածի 1-ին մասում «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով» բառերը փոխարինել «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս՝ օրենքով» բառերով: Նույն հոդվածի 2-րդ մասում «դեպքերում» բառերը փոխարինել «դեպքում» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
7.		**«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ , հոդված 1,2**	Առաջակվում է. 1) 1-ին հոդվածի 1-ին մասում «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով, իսկ «կարգով և դեպքերում» բառերը փոխարինել «դեպքերում և կարգով» բառերով. 2) 2-րդ հոդվածի շրջանակներում Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը» բառերը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
8.		**«Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածում «10.» թվից հետո լրացնել «Քրեական հետապնդում հարուցվելու դեպքում» բառերը, իսկ «կարող են կասեցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով» բառերը փոխարինել «կասեցվում են օրենքով» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:

9.		**«Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածում «7.» թվից հետո լրացնել «Քրեական հետապնդում հարուցվելու դեպքում» բառերը, իսկ «կարող են կասեցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով» բառերը փոխարինել «կասեցվում են օրենքով» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
10.		**«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով» բառերը փոխարինել «Քրեական հետապնդման շրջանակներում օրենքով» բառերով, «սահմանված» բառից հետո լրացնել «դեպքերում և» բառերը, իսկ «լիազորությունների կասեցման դեպքում» բառերը փոխարինել «լիազորությունները կասեցնելիս» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
11.		**«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ հոդված 1**	1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով» բառերը փոխարինել «Քրեական հետապնդման շրջանակներում օրենքով» բառերով, «սահմանված» բառից հետո լրացնել «դեպքերում և» բառերը, իսկ «լիազորությունների կասեցման դեպքում» բառերը փոխարինել «լիազորությունները կասեցնելիս» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
12.		**Նախագծերի փաթեթ**	Առաջարկվում է Նախագծերի փաթեթը լրացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով. « **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ** **«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ**	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծերի փաթեթում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:

			ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից «քրեական հետապնդում հարուցվելիս և» բառերը հանել, իսկ «նրա պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով հարկադրանքի միջոց կիրառելու մասին» բառերով: **Հոդված 2.** Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով հարկադրանքի միջոց կիրառելու մասին» բառերով: **Հոդված 3.** Օրենքի 61-րդ հոդվածի 13-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման շրջանակներում լիազորությունների կասեցման հիմքով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողի համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսը, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային		

			ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:»: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		
13.		**Նախագծերի փաթեթ**	Առաջարկվում է Նախագծերի փաթեթը լրացնել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով. « **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 6-րդ մասում «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման» բառերը փոխարինել «լիազորությունների կասեցման» բառերով: **Հոդված 2.** Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում «պարապուրդի,» բառից հետո լրացնել «քրեական հետապնդման շրջանակներում լիազորությունների կասեցման,» բառերը: **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:

			պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		